Արձանագրություն 3

2018թ. Ապրիլի 4-ին տեղի ունեցավ 22 Կողայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 3 դասարանի ծնողական ժողովը: Ծնողական ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Լիլիթ Բաբայանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Զոյա Գևորգյանը:

Օրակարգում

1. Ուսումնադաստիարակչական հարցեր:
2. Էքսկուրսիա:
3. Միջոցառման կազմակերպում:
4. Ընթացիկ հարցեր (կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին:

Ելույթ ունեցավ դասղեկ Լիլիթ Բաբայանը ներկայացնելով տույն կիսամյակի ընթացքում առաջացած ուսումնական խնդիրների մասին, ներկայացվեց այն աշակերտների հետ կատարվելիք աշխատանքը, ովքեր դժվարություններ ունեն ուսման մեջ, նշվեց այդ դժվարությունները հաղթահարելու ուղիները: Ներկայացվեց աշակերտների ընթացիկ կիսամյակի արդյունքները: Ծնողներին անհատական ներկայացվեց իրենց երեխաների բացթողումներն ու թերացումները:

Որոշեցին՝

Ավելի հետևողական լինել ավելի բարձր արդյունավետություն ապահովելու համար: Այն ծնողները, ում երեխաները կարող են գերազանց լինել, սակայն ունեն որոշ թերացումներ, որոշեցին ավելի շատ համագործակցել ուսուցիչների հետ, տանը ավելի շատ աշխատել երեխաների հետ, որպեսզի վերացնեն բացթողումները: Կարդալ և գրել դժվարացող աշակերտների ծնողները խոստացան ավելի ուշադիր լինել իրենց երեխաներին, դժվարության դեպքում փորձել ուսուցիչների հետ միասին կարգավորել ցանկացած հարց կապված դասերի հետ

2.Լսեցին:

Դասվարը խոսեց նաև գեղագիտական դաստիարակության հետ կապված խնդիրների մասին, կարևորելով այն երեխաների դաստիարակության հարցում: Գեղագիտական դաստիարակությանը նպաստելով, նաև նոր գիտելիքներ ձեռք

բերելու նպատակով առաջարկվեց երեխաներին տանել կրթական ծրագրերի իրականացման կենտրոն՝ Dasaran.am:

Որոշեցին՝

Ծնողական խորհրդի անդամները որոշեցին կազմակերպել տրանսպորտի և երեխաների սնունդի հարցը:

3. Լսեցին:

Դասարանի երեխաները մասնակցում են «Հէքիաթն է կանչում» միջոցառմանը:Ծնողներին ներկայացվեցմիջոցառման կազմակերպմանը վերաբերվող հարցեր: Հարցի վերաբերյալ եղան նաև առաջարկություններ՝ բեմական հանդերձանքի հետ կապված:

Որոշեցին՝

Անհրաժեշտության դեպքում աջակցել դասղեկին ուսումնական պրոցեսում և միջոցառումների կազմակերպման ժամանակ:

4.Լսեցին:

Ընթացիկ հարցեր (կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն): Դասղեկը հորդորեց հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ երեխաները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, օրագրերով, դպրոցական համազգեստով: Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոնների և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում: Պահել ծնող-դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում հաճախեն դպրոց իրենց երխաների վրա վերահսկողությունն մեծացնելու նպատակով:

Որոշեցին՝

Առավել ուշադիր և հետևողական լինել , որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Ե. Հարությունյան

Քարտուղար՝ Թ. Անտոնյան